

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**



Կազմել է՝ համայնքի ղեկավար՝ _____/Ա. Ալոյան/
Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 22-Ն որոշմամբ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք բազմաբնակավայր համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի (հեռահար նպատակի) իրականացում:

ՀԶՀԾ-ն կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից երաշխավորված „Համայնքի զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության նախագծին,, համապատասխան:

ՀԶՀԾ-ն կազմված է վեց բաժիններից՝

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն.
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության եվ ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական եվ մարզային, միջհամայնքային համագործակցության եվ այլ ծրագրեր ու միջոցառումներ
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում
5. Ոլորտային ծրագրեր
6. ՀԶՀԾ մոնիթորինգ:

Ծրագրի նախագծի համար հիմք են հանդիսացել Աշոցք համայնքի ղեկավար Ա. Ալոյանի նախընտրական ծրագիրը, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լուծումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք բազմաբնակավայր համայնքը, որը իր մեջ ներառում է **Աշոցք, Բավրա, Սարագյուղ, Թավշուտ, Սիգավետ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, Զույգաղբյուր և Կարմրավան** գյուղերը, գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանում:

Աղյուսակ 1.1.1 Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից և բարձրությունը ծովի մակերևույթից

Հ/Հ	Բնակավայր	Բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից /կմ/	Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից /մետր/
1	Աշոցք	0	2009
2	Բավրա	10,4	2110
3	Զույգաղբյուր	1,0	2015
4	Թավշուտ	9,1	2040
5	Կարմրավան	4,5	2010
6	Կրասար	4.1	2007
7	Ղազանչի	4,5	2030
8	Մեծ Սեպասար	4,8	2008
9	Սարագյուղ	14,3	2150
10	Սիգավետ	9.3	2070
11	Փոքր Սեպասար	6.0	1996

Համայնքի աշխարհագրական դիրքը բարձր լեռնային է, տարածքի ռելիեֆը բարդ՝ համեմատաբար ցածրադիր՝ Ախուրյան և Աշոցք գետերի հատման հատվածում և բարձր՝ արևելյան հատվածում՝ Զավախքի լեռնաշղթայի ուղղությամբ: Տարածքի

ամենացածր կետը 1968 մետր է , առավելագույնը՝ 3196 մետր:

Կլիման բարեխառն է, բնորոշ կարճատև զով ամառով և երկար ու ցուրտ ձմեռով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 4,1 է, բացարձակ առավելագույնը՝ 32, նվազագույնը՝ -36: Սառնամանիքների տևողությունը 167 օր, ձյունածածքի տևողությունը 156 օր: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 650-700 մմ:

Աշոցք համայնքը գտնվում է սեյսմիկ վտանգի 3-րդ գոտում:

Համայնքը հյուսիսից սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, արևելքից՝ Տաշիրի տարածաշրջանին, հարավից՝ Սարապատ համայնքին և արևմուտքից՝ Ամասիայի տարածաշրջանին:

Համայնքով է անցնում Գյումրի-Նինոծմինդա (Վրաստան) միջպետական նշանակության ավտոճանապարհը:

Համայնքի կենտրոն Աշոցքի հեռավորությունը մարզկենտրոն Գյումրիից 35 կմ է, մայրաքաղաք Երևանից՝ 157 կմ:

Աշոցքը ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Իշկիգուլա (Iskigulu) ձևով: Մինչև Հայաստանի առաջին բաժանումը, այն ամենայն հավանականությամբ մտել է Գուգարք նահանգի, իսկ այնուհետև՝ Այրարատ նահանգի կազմի մեջ, որի 14-րդ գավառն էր: Գավառի կենտրոնը Աշոցք ավանն էր (ներկայիս Ղազանչի (Ղալդուլի) գյուղի տեղում), որը ծաղկում ապրեց հատկապես Բագրատունիների գահակալության ժամանակահատվածում: Համայնքը հարուստ չէ պատմական հուշարձաններով, չնայած այդպիսիք անշուշտ եղել են, բայց ժամանակի ընթացքում տարբեր արհավիրքների (պատերազմներ, երկրաշարժեր և այլն) պատճառով քանդվել և ավերակներ են դարձել: Այդ են վկայում Ղազանչիի, Աշոցքի, Կրասարի Մեծ Սեպասարի և մյուս բնակավայրերի շրջակայքում նկատվող հին բնակատեղիները, հուշարձանների ավերակները, շինությունների մնացորդները: Մյուս կողմից դեռևս շատ քիչ են ուսումնասիրված համայնքի տարածքում եղած պատմական հուշարձանները. տապանաքարեր, Ք. ա. 2-1 հազարամյակների դամբարանադաշտեր, մեգալիթյան կառույցներ, ամրոցների, եկեղեցիների, մատուռների, քարավանատների մնացորդներ, կամուրջներ և այլն:

Համայնքի բնակավայրերի բնակչության գերակշռող մասի նախնիները հիշյալ տարածքներում սկսել են հաստատվել հիմնականում 19-րդ դարի 20-ական թվականների վերջերից մինչև 60-ական թվականները՝ գաղթելով Արևմտյան Հայաստանի Մուշ, Ալաշկերտ, Արդահան, Բասեն, Էրզրում և Կարս գավառներից: Մինչև Արևելյան Հայաստանի խորհրդայնացումը տարածաշրջանը մտնում էր Կարսի մարզի Աղբաբայի շրջանի մեջ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նույն տարածքը Լենինականի գավառի Աղբաբայի գավառամասն էր կազմում, իսկ 1937 թվականի դեկտեմբերի 31-ից ընդգրկվեց Ղուկասյանի շրջանի կազմում: Վերջինս միայն 1990 թվականին կրկին վերանվանվեց Աշոցք՝ համանուն շրջկենտրոնով, որը այժմյան Աշոցք համայնքի կենտրոնն է:

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին.

Աշոցք գյուղ

Գյուղը հիմնադրվել է 1829թ.-1830թ., Աշոցք գետի աջ ափին, Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ և դրան հարակից գավառներից գաղթականների կողմից, լքված ու ամառի հին բնակավայրի տեղում: Գյուղը զբաղեցնում է 220 հա տարածք: Գյուղում պահպանվել է XIX դարի եկեղեցի, հին գերեզմանոց: Այն սկզբում կոչվել է Ղզլղոչ, հետագայում Ղուկասյան, իսկ այժմ՝ Աշոցք: Բնակավայրը ծովի մակերևույթից բարձր է 2006-2039 մետր: Աշոցքում գործում են հիվանդանոց, պոլիկլինիկա, մշակույթի տուն, գրադարան, միջնակարգ դպրոց, արվեստի դպրոց, մանկապարտեզ, պետական, տարածքային կառավարման մարմինների ստորաբաժանումներ, բանկի մասնաճյուղ, փոստ, ավտոմատ հեռախոսակայան, բջջային կապի սպասարկման գրասենյակներ, էլ. ցանց, այլ հիմնարկներ ու կազմակերպություններ: Աշոցքը տարածաշրջանի ամենամեծ բնակավայրն է, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուներ 2827 բնակիչ:

Բավրա գյուղ

Բավրա գյուղը (նախկինում կոչվել է Տիտոյի խարաբա կամ Թիթոյի խարաբա) գտնվում է հանրապետության ծայր հյուսիսում, Վրաստանի Հանրապետության սահմանից 2,5 կմ հեռավորության վրա: Բավրայի բնակիչների նախնիները եկել են 1860 թվականին Արդահանից. նախ տեղափոխվել են Ախալքալաքի Բավրա գյուղ, իսկ հետո՝ Հայաստան: 1958 թվականի դեկտեմբերի 8-ի երկրաշարժի հետևանքով գյուղն ավերվել է և նորից կառուցվել Գյումրի-Վրաստան ավտոճանապարհի հարևանությամբ: Պահպանվել են հին Բավրայի ավերակները: Գյուղից հարավ-արևմուտք կան մեկ այլ բնակավայրի և բերդի ավերակներ: Գյուղում գործում է դպրոց, բուժկետ, կապի բաժանմունք, եկեղեցի, մերձակայքում տեղակայված են սահմանապահ ուղեկալ, մաքսատուն և բանկի մասնաճյուղ:

Զույգաղբյուր գյուղ

Զույգաղբյուր գյուղը հիմնադրվել է 1820 թվականին՝ Արևմտյան Հայաստանի Բասեն գավառից գաղթած, սկզբնական շրջանում Սպիտակի տարածաշրջանում հաստատված, այնուհետև դեպի Աշոցք գավառ տեղափոխված բնակչության կողմից: Բնակավայրը սկզբում կոչվել է Չիֆթալի, իսկ 20-րդ դարի կեսերին վերանվանվել Զույգաղբյուր: Գյուղի ազգաբնակչությունը բացառապես հայեր են: Գյուղն իր մասնակցությունն է ունեցել ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ հետագա տարիներին երկրում կատարված փոփոխություններին, անցել է խորհրդայնացման և կոլեկտիվացման բարդ ժամանակաշրջանը, մասնակցություն է ունեցել Հայրենական մեծ պատերազմին, հետպատերազմյան վերականգման աշխատանքներին, արցախյան ազատամարտին: Արցախյան գոյամարտին գյուղը ունեցել է իր մասնակցությունը և տվել մեկ զոհ:

1986 թվականին գյուղը տեղափոխվել է նոր բնակատեղի, գյուղում առկա ջրային պաշարների համար ջրամբար կառուցելու և ջուրը Գյումրի տեղափոխելու պատճառով:

Պատմա-մշակութային հուշարձաններն են՝

<<Հին Զույգաղբյուր>> գյուղատեղիում, հարավ-արևելյան հատվածում է գտնվում քանդված եկեղեցի (18-19-րդ դարեր), իսկ գյուղից 1.5 կմ հարավ-արևմուտք գտնվում են Մեգալիթյան պարիսպ և դամբարանադաշտ (Ք.ա. 2-ից 1-ին հազարամյակներ):

Թավշուտ գյուղ

Գյուղը տեղադրված է Ծաղկաշեն գետի աջակողմյան լեռնալանջի վրա: Բնակչության նախնիների մի մասը 1878 թ-ին տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանից: Բնակավայրը նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ և ունեցել է Թազագյուղ, Թազաքենդ, Թազաքյան անվանումները: Թավշուտ է վերանվանվել 1967 թ-ին: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր:

Գյուղի շրջակայքում կան հայկական հին գերեզմաններ:

Բնակավայրն ունի դպրոց, գրադարան , բուժկետ:

Կարմրավան գյուղ

Գյուղը հիմնադրվել է 1925 թվականին Ղարսի գավառից գաղթվածների կողմից: Հին բնակատեղիում հայտնաբերվել են Ք.ա. 2-րդ հազարամյակի ամրոցի մնացորդներ, քանդված եկեղեցի, դամբարանադաշտ (Ք.ա. 2-ից 1-ին հազարամյակներ) և նույն ժամանակաշրջանի բնակավայրի ավերակներ:

Գյուղում գործում է հիմնական դպրոց, բուժկետ:

Կրասար գյուղ

Կրասար գյուղը հիմնադրվել է 1829-1830 թվականներին Խնուսից, Բասենից, Մուշից գաղթած արևմտահայերի կողմից, իսկ ավելի ուշ այստեղ են հաստատվել ընտանիքներ Ղարսի Քյորակդարա և Տալկով գյուղերից: Սկզբում այն կոչվել է Կուրդբուլաղ, Կուրտի բուլաղ, Ղուրդբուլախ, իսկ 1946 թվականից Կրասար: Գյուղից 2 կմ հեռավորության վրա, Ախուրյան գետի Աշոցք վտակի վրա կառուցված է Կրասարի եռաթռիչք կամուրջը, որը շատ նման է Կարսի նշանավոր կամրջին: Կամրջի կառուցման վերաբերյալ հավաստի տեղեկություններ կան Ղ. Ալիշանի «Շիրակ» գրքում, որտեղ նշվում է, որ այն

կառուցվել է 1873թ. «Ստեփանոս Անանիկյանցի կողմից՝ «արկ վայելուչ կամուրջ եռակամար, սև և կարմիր քարամբք»:
Կամրջից քիչ հեռու հայտնաբերվել է նաև քարավանատուն:

Գյուղն ունի դպրոց, բուժկետ, գրադարան:

Կրասարը Գուսան Շահենի ծննդավայրն է:

Ղազանչի գյուղ

Բնակավայրը հիմնադրվել է 1852-1953 թվականներին: Նախնիները ներգաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Իրիցու գյուղից և հաստատվել պատմական Աշոցք գավառի կենտրոն հանդիսացող Աշոցք ավանի ավերակների մոտ: Գյուղը սկզբում կոչվել է Ղայղուլի, ապա Ղազանչի: Հիմնադրման պահին գյուղն ուներ ընդամենը 24 տնտեսություն, որը հետագայում հասավ 330-ի: Բնակավայրի մոտ

1968 թվականին գյուղին մերձակա աղբյուրների ջուրը Գյումրի քաղաք տեղափոխվելու պատճառով բնակչությունը տեղահանվել է և տեղափոխվել նոր բնակատեղի:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, մանկապարտեզ, կապի բաժանմունք:

Ղազանչիում են ծնվել ԳԱԱ ակադեմիկոս, պատմաբան Վարդգես Ալեքսանի Միքայելյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասեր, հնագետ-ազգագրագետ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը:

Մեծ Սեպասար գյուղ

Գյուղի բնակչության նախնիները 1828-30թթ գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառից: Գյուղը նախկինում ունեցել է Շիշթաբա, Շիշթափա, անվանումները: Մեծ Սեպասար է վերանվանվել 1946 թվականին: Գյուղում հիմնանորոգումից հետո գործում է Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, շրջակայքում պահպանվել են հին ամրոցի, բնակատեղիի մնացորդներ: 2004 թվականից սկսած «Դարի սուրբ» կոչվող տեղամասում պեղումներ է իրականացնում Շիրակի երկրագիտական թանգարանը: Այն պատկանում է «Կուր-արաքսյան» կոչվող մշակույթին: Հայտնաբերվել են տարածաշրջանում զուգահեռները չունեցող հետաքրքիր գտածոներ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց:

Սարագյուղ գյուղ

Սարագյուղը գտնվում է Աշոցք համայնքի հյուսիսային մասում, բարձրադիր սարահարթի վրա, Զավախքի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթ Աչքասարի (3196) ստորոտին: Սարագյուղի բնակիչները ներգաղթել են 1930 թվականին Էրզրումի Քոլի կոչվող բնակավայրից: Բնակավայրի նախնական անվանումը եղել է Դարաքյոյ, ապա վերանվանվել Սարագյուղ:

1958թ. տեղափոխվելով 5 կմ դեպի արևմուտք հիմնադրվել է նոր Սարագյուղը: Այն Աշոցք համայնքի ամենաբարձր գյուղն է և գտնվում է ծովի մակերեւոյթից 2150 մետր բարձրության վրա: Հին գյուղում մնացել են եկեղեցու (1878թ.) ավերակները:

Գյուղն ունի հիմնական դպրոց, բուժկետ:

Սիզավետ գյուղ

Գյուղը հիմնադրել են Վրաստանի հայաբնակ Հեշտիա և Լոռու տարածաշրջանի գյուղերից եկվորները: Նախկինում այն ունեցել է Քոռադքյուր, Ծաղկաշեն անվանումները: Սիզավետ է վերանվանվել 1967 թվականին: 1873 թվականին գյուղն ուներ 294 բնակիչ, իսկ 1939 թ-ին՝ 1300 և այդ ժամանակամիջոցում տարածաշրջանի ամենամեծ գյուղերից մեկն էր համարվում: Գյուղում պահպանվել է Սբ. Ամենափկիչ եկեղեցին (1875-78 թթ.), հին գերեզմանոց:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, բուժկետ, գրադարան:

Փոքր Սեպասար գյուղ

Գյուղը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին: Փոքր Սեպասարը հիմնադրվել է 1924 թվականին Մուշից, Բասենից և Ալաշկերտից գաղթվածների կողմից: Ավելի ուշ այստեղ բնակություն են հաստատել նաև Մեծ Սեպասար գյուղի բնակիչներ: Գյուղի բարձունքին է գտնվում <<Դարի սուրբ>> մատուռը: Տարածքում հայտնաբերվել են նաև ամրոցի ավերակներ, որոնք թվագվում են Ք.ա 2-1 հազարամյակներին:

Գյուղում չնայած դպրոցի շենքի առկայությանը դպրոց չի գործում: Կա նաև բուժկետ:

1.2 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ

Աշոցք համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 7667 մարդ (աղյուսակ 2):

Աղյուսակ 1.2. 1Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
-----	----------------------	-------------------------------	---------------------------------	--

			թվաքանակը	
1	Աշոցք	2827	770	725
2	Բավրա	653	137	120
3	Զույգաղբյուր	565	124	103
4	Թավշուտ	389	91	81
5	Կարմրավան	255	68	64
6	Կրասար	551	125	119
7	Ղազանչի	637	145	124
8	Մեծ Սեպասար	945	222	185
9	Սարագյուղ	215	52	37
10	Սիզավետ	392	84	54
11	Փոքր Սեպասար	238	50	43
	Ընդամենը	7667 մարդ	1868 տ/տ.	1655 տ/տ.

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 7667 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 4049 և կանայք՝ 3618: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 1.2.2 Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Այդ թվում՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի									
			Աշոցք	Բավրա	Զույգաղբյուր	Թավշուտ	Կարմրավան	Կրասար	Ղազանչի	Մեծ Սեպասար	Սարագյուղ	Սիզավետ

1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	7667	2827	653	565	389	255	551	637	945	215	392	238
	Տղամարդիկ	4049	1544	260	220	204	136	285	333	503	111	218	116
	Կանայք	3618	1417	235	287	221	131	260	309	480	96	144	117
	0-4 տարեկան	420	141	45	45	22	4	31	25	55	19	10	23
	5-6 տարեկան	222	78	21	15	13	20	16	14	24	-	6	15
	7 տարեկան	117	48	10	5	6	12	11	8	9	2	4	2
	8-14 տարեկան	624	224	57	32	25	12	52	52	97	26	36	11
	15-17 տարեկան	695	491	15	17	15	53	25	14	36	6	17	6
	18 տարեկան	107	30	5	2	5	45	10	5	14	4	4	3
	16-62 տարեկան	5481	2158	306	365	314	189	379	466	725	137	270	172
	63 և բարձր տարիքի	666	281	50	37	41	21	47	70	58	20	31	10
2.	Կենսաթոշակառուներ	760	259	57	45	29	22	63	67	140	25	25	28
3.	Միայնակ չաշխատող կենսաթոշակառուների թվաքանակը	44	18	5	7	0	0	11	1	1	0	1	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	37	10	1	3	3	1	3	6	9	0	1	0
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	10	2	0	0	0	0	0	0	8	0	0	0
	Միայնակ մոր երեխաների թվաքանակը	12	5	3	0	0	1	0	0	2	0	1	0
	Ամուսնալուծված անձի երեխաների թվաքանակը	3	0	0	1	0	0	2	0	0	0	0	0
	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	Հաշմանդամներ, այդ թվում՝	243	125	17	20	12	11	4	9	23	2	14	6
	Մանկուց հաշմանդամներ	12	3	0	0	1	0	0	0	2	2	2	2
	Աշխատունակներ	5800	2233	601	443	304	201	371	490	615	127	234	181
	Զբաղվածներ	4657	1735	540	362	207	180	287	366	488	113	216	163
	Գործազուրկներ	1143	498	61	81	97	21	84	124	127	14	18	18
	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված և նպաստառու ընտանիքների թիվը	183	90	9	10	6	4	11	11	32	2	3	5

Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	4	1	0	1	0	0	0	1	0	1	0	0
Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների քանակը	29	11	1	0	0	0	4	0	6	0	4	3
Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը												
Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	422	77	42	16	20	19	41	60	105	5	25	12
Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	591	148	50	22	22	27	52	60	148	6	36	20

1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Աշոցք համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 11 անդամներով (ընտրված Աշոցք համայնքի տարբեր բնակավայրերից): Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 39 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Աշոցք համայնքի Աշոցք գյուղի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը բավարար է, աշխատակազմի համար պայմանները բավարար են, կահավորանքի մի մասը նորացված է, մյուսը՝ բավականին հին: Համայնքապետարանում առկա համակարգչային և այլ տեխնիկա, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 14-Ա որոշմամբ (աղյուսակ 4):

Աղյուսակ 1.3.1 Աշոցք համայնքի աշխատակազմը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)	Բարձր լեռնային հավելում (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1	Համայնքի ղեկավար	1	267000	8000	275000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	198000	8000	208000
3	Վարչական ներկայացուցիչ (Բավրա, Զույգաղբյուր, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար)	5	147000	8000	155000
4	Վարչական ներկայացուցիչ (Թավշուտ, Կարմրավան, Սարագյուղ, Սիզավետ)	4	137000	8000	145000
5	Վարչական ներկայացուցիչ Փոքր Սեպասար բնակավայրում	1	137000	0	137000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
6	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	165000	8000	173000
7	Աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Աշոցքի տարածքային բաժնի պետ(1.3-1)	1	256623	8000	264623
8	Աշխատակազմի գլխավոր մասնագետ(2.3-1)	1	150000	8000	158000
9	Աշխատակազմի գլխավոր մասնագետ(2.3-2)	1	150000	8000	158000
10	Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)	1	148000	8000	156000
11	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1)	1	128000	8000	136000

12	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-2)	1	128000	8000	136000
13	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1)	1	123000	8000	131000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					
14	Օպերատոր վարչական նստավայրում (Բավրա, Զույգաղբյուր, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Թավշուտ, Կարմրավան, Սարագյուղ, Սիզավետ)	9	102000	8000	110000
15	Օպերատոր Փոքր Սեպասարի նստավայրում	1	102000	0	102000
16	Համակարգչային օպերատոր	1	102000	8000	110000
17	Գործավար	1	102000	8000	110000
18	Հարկային գործակալ Մեծ Սեպասար բնակավայրում	1	102000	8000	110000
19	Տնտեսվար	1	132000	8000	140000
20	Մեխանիզատոր	1	132000	8000	140000
21	Վարորդ	1	102000	8000	110000
22	Աղբատար մեքենայի վարորդ	1	72000	8000	80000
23	Բանվոր	1	97000	8000	105000
24	Հավաքարար	1	77000	8000	85000
24	Պահակ	1	77000	8000	85000

Համայնքում տեղական ինքնակառավարումը առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր, ավագանու նիստերի ընթացքում լսել համայնքի ղեկավարի, ՀՈԱԿ-ների տնօրենների, այլ պատասխանատուների հաշվետվությունները,
- համայնքային ծառայողների և մյուս աշխատակիցների պարբերական վերապատրաստումներ՝ ուսուցողական և փորձի փոխանակման ծրագրեր,
- թարմացնել համայնքապետարանի կայքը, այն դարձնելով ինտերակտիվ՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ,

- առաջիկայում ստեղծվելիք սպասարկման գրասենյակում «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառման և «Մալքերի» համակարգի միջոցով աշխատակազմի աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ հասնել ավելի արագ և որակյալ համայնքային ծառայության մատուցմանը,
- բնակիչ-ՏԻՄ համագործակցության ընթացքում հերթերից և ժամանակի կորստից խուսափելու նպատակով առավել ընդլայնել էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը,
- մատուցվող ծառայությունների ընդլայնում և բնակչության սպասարկման որակի բարձրացում,
- ապահովել բնակիչների առավել ակտիվ մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

Համայնքային ոչ առևտրային 4 կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 19-Ա որոշմամբ (աղյուսակներ 5-8):

Աղյուսակ 1.3.2 Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

N	Զբաղեցրած պաշտոնը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը /ՀՀ դրամ /	Հավելում /բարձր լեռնային/	Հասնում է /ՀՀ դրամ/
1.	Տնօրեն	1	74752	8000	82752
2.	Հաշվապահ	1	72752	8000	80752
3.	Դասատուներ	4	291000	32000	323000
3.	Դասատուներ	2	155800	16000	171800
4.	Հավաքարար	1	72752	8000	80752
	Ընդամենը՝	9	667056	72000	739056

Աղյուսակ 1.3.3 Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

N	Զբաղեցրած պաշտոնը	Հաստիքային մակարդ	Դրույքի չափը /դրամ/	Հավելում /բարձր լեռնային	Հասնում է /դրամ/
1.	Տնօրեն	1	74752	8000	82752
2.	Հաշվապահ	0.5	36376	4000	40376
3.	Գրադարանավար	1	72752	8000	80752
4.	Հավաքարար	1	72752	8000	80752
	Ընդամենը՝	3.5	256632	28000	284632

Աղյուսակ 1.3.4. Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

N	Զբաղեցրած պաշտոնը	Հաստ իքի	Դրույքի չափը /դրամ/	Հավելում /բարձր լեռնային/	Հասնում է /դրամ/
1.	Տնօրեն	1	92000	8000	100000
2.	Հաշվապահ	1	84000	8000	92000
3.	Դաստիարակ	1	92000	8000	100000
4.	Դաստիարակ	1	92000	8000	100000
5.	Դաստիարակի օգն.	2	84000	8000	92000
6.	Խոհարար	1	84000	8000	92000
7.	Խոհարարի օգ.	1	84000	8000	92000
	Ընդամենը՝	8	696000	64000	760000

Աղյուսակ 1.3.5. Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մարզա-մշակույթային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

N	Զբաղեցրած պաշտոնը	Հատիկային	Դրույքի չափը /դրամ/	Հավելում /բարձր լեռնային/	Հասնում է /դրամ/
1.	Տնօրեն	1	74752	8000	82752
2.	Հաշվապահ	1	72752	8000	80752
3.	Խմբավար	1	72752	8000	80752
4.	Խմբավար	1	77904	8000	85904
5.	Մարզիչ	2	72752	8000	80752
6.	Հավաքարար	1	72752	8000	80752
	Ընդամենը՝	7	516416	56000	572416

1.4 Գյուղատնտեսություն

Համայնքն ունի 21859,45 հա գյուղ. նշանակության հողեր, որից՝

- 7957,82 հա-վարելահողեր,
- 10603,95 հա արոտներ,
- 2473,54 հա խոտհարքներ
- 824,14 հա այլ գյուղատնտեսական հողեր:

Համայնքի գյուղացիական տնտեսություններն ունեն.

- 12913 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում՝
 - 6536 գլուխ կով,
- 232 խոզ,
- 8372 գլուխ ոչխարներ և այծեր,
- 135 ձիեր,
- 8650 թռչուն,

➤ 557 մեղվաընտանիք,

Գյուղատնտեսությունում ինքնագբադված բնակչության թվաքանակը 3305 է :

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն վարելահողերի մեծ մասը չի օգտագործվում հիմնականում հողօգտագործողների բնակավայրից բացակայության, գյուղատնտեսական աշխատանքների ծախսատարության, գյուղատնտեսական տեխնիկայի սակավության, հողակտորների անհարմար բաշխվածության, հեռավորության և այլ պատճառներով: Համայնքի գյուղատնտեսական նշանակության 1 հա հողի միջին շուկայական գինը 150 000 դրամ է:

Համայնքաբնակները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, սակայն տարածքում խոշոր ֆերմերային տնտեսություններ դեռևս չկան: Արտադրված գյուղմթերքի մի մասը գյուղացիական տնտեսություններն են սեփական կարիքների համար օգտագործում, մի մասն էլ /հիմնականում միս և կաթ/ հանձնում մթերող կազմակերպություններին կամ անհատ գնորդներին: Դեռևս վատ են օգտագործվում արոտները, որոնցից շատերում կա ջրարբիացման խնդիր: Այս տարվանից Ղազանչի, Մեծ Սեպասար և Զույգաղբյուր բնակավայրերում «Գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից մեկնարկեց հիշյալ գյուղերի արոտավայրերի ջրարբիացման և գյուղատնտեսական տեխնիկայի ապահովման ծրագիրը, որն անշուշտ դրական ազդեցություն կունենա անասնապահության զարգացման համար:

Համայնքում գործող խոշոր գյուղատնտեսական արտադրության ձեռնարկություններ չկան:

3 փոքր արտադրամասերում միայն իրականացվում են .

- կաթի վերամշակման աշխատանքներ /սեզոնային/ -2
- հացաթխում-1:

Դրանցում ներգրավված աշխատողների թիվը 10 է :

1.5 Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում են թվով 11 առողջապահական կազմակերպություններ՝ 63 աշխատատեղով:

Այդ թվում՝ 1 հիվանդոց 92 մահճակալ տեղով, 10 բուժա-մանկաբարձական կետեր:

1.6 Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Համայնքի վարչական տարածքը 28397,12 հա է, այդ թվում՝

գյուղատնտեսական նշանակության հողեր – 21859,45

հա,

բնակելի շինությունների տակի հողեր -724,14 հա,

արդյունաբերական արտադրական շինությունների տակի հողեր-15,72հա,

ընդերքօգտագործման հողեր- 86,68հա,

ճանապարհների տակի հողեր- 44,73հա,

առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակույթային նշանակության հողեր- 208,68հա,

անտառային հողեր- 58,51հա,

ջրային ֆոնդի հողեր –147,76 հա,

հատուկ պահպանվող տարածքներ – 4488,28 հա,

համայնքի այլ հողեր – 1519,01 հա,

Համայնքում առկա են 1 վթարային և 20-ից ավելի վերանորոգման կարիք ունեցող բազմաբնակարան շենքեր, հասարակական նշանակության այլ շենքեր, որոնք պահանջում են հրատապ լուծում:

Հիմնախնդիրներ՝

- 2 Համայնքի ոչ մի բնակավայր չունի գլխավոր հատակագիծ,
- 3 Համայնքի փողոցային ցանցի անբարեկարգ իրավիճակ.
- 4 երկրաշարժից վթարված բազմաբնակարան շենքերի առկայություն.
- 5 բազմաբնակարան շենքերի բակերի անբարեկարգ վիճակ.

1.7 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում:
Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից բացառությամբ Կրասար և Սիզավետ բնակավայրերի:
Խմելու որակի ջրի պաշարներով ապահովվածությունը բարենպաստ է: Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի տեխնիկական վիճակը:

Հիմնախնդիրներ՝

- ջրային կառույցների քայքայված և մաշված վիճակ.
- ջրավազաններից ջրի մեծ չափերի կորուստ.
- անսարք ջրային կառույցների առկայություն.

Էներգամատակարարում

Աշոցք համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ ցանցներ» ընկերության կողմից: Գոյություն ունեցող ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 12,8 մվտ է:

Աշոցք համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ – Արմենիա» ընկերության կողմից » ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը օրական կազմում է 1,0 հազ.խմ է:

2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Աշոցք համայնքում գազաֆիկացվել է 315 բնակարան, այդ թվում՝ 40 բազմաբնակարան շենք:

Արտաքին լուսավորություն

2016թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Աշոցք համայնքում լուսավորվող փողոցների թիվը կազմել է 14, իսկ լուսավորության ցանցը՝ 7 կմ:

Հիմնախնդիրներ՝

- արտաքին լուսավորության լուսակետերի անբավարար քանակ.
- արտաքին լուսավորության ցանցի անբավարար տեխնիկական վիճակ.
- էներգատար լամպերի օգտագործում:

Փողոցներ

Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է:

Կարևոր հանգամանք է համայնքի ներքնակավայրային և միջքնակավայրային ճանապարհների փոսալցումների, /կենտրոնական ճանապարհից դեպի գյուղ/ բարեկարգման աշխատանքների իրականացումը խճապատման և բիտումապոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես կերկարացնի ճանապարհի ծածկի շահագործման ժամկետը:

Հիմնախնդիրներ՝

- համայնքի փողոցների անբարեկարգ վիճակ.

Աղբահանություն, սանիտարական մաքրում

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում են համայնքապետարանի աշխատակազմի կողմից:

Չնայած սանիտարական մաքրման և աղբահանության ուղղությամբ նկատելի են դրական փոփոխություններ, սակայն դեռևս շատ անելիքներ կան: Անհրաժեշտ է ձեռք բերել ավլող, բարձող տեխնիկա, աղբի հեռացման հատուկ մասնագիտացված ավտոմեքենաներ:

Հիմնախնդիրներ՝

- " շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ֆիզիկական մաշվածություն և անբավարար քանակ.
- " աղբամանների բացակայությունը.
- " համայնքի տարբեր հատվածներում շինարարական աղբի մեծ կուտակումների

առկայություն և չնախատեսված վայրերում աղբանեղումներ.

" *համայնքում կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման ձեռնարկությունների բացակայություն.*

" *շենքերի բակերում սանմաքրման աշխատանքների բացակայություն.*

1.8 Բնակարանային տնտեսություն

Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը – 64/ 539

բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները -16656185 քմ,

բազմաբնակարան վթարային բնակելի շենքեր և բնակարաններ –1

համայնքում առկա ժամանակավոր կացարաններ - 15

Կա վերանորոգման անհրաժեշտություն համայնքի բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման ցանցի, քանի որ շենքերի ընդհանուր օգտագործման ջրագծերը ամբողջովին քայքայված են:

Վատ վիճակում են գտնվում շենքերի տանիքները, առաջնահերթ վերանորոգման կարիք ունեն մոտ 32 բազմաբնակարան շենքերի տանիքներ, ուստի անհրաժեշտ է այդ վերանորոգման աշխատանքներին աջակցելու ծրագիր:

Բարեկարգման կարիք ունեն բակային տարածքները. կա խաղահրապարակներ կառուցելու կարիք:

Հիմնախնդիրներ՝

- *բազմաբնակարան շենքերի տանիքների անմխիթար վիճակ.*
- *մաշված և վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն.*
- *Բակային տարածքների անբարեկարգ վիճակ.*
- *Խաղահրապարակների բացակայություն.*
- *համատիրությունների կազմավորում.*

1.9 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Աշոցք համայնքում զարգացած է ավտոմոբիլային ճանապարհների ցանցը: Աշոցքի միջով անցնում է Գյումրի- Բավրա-

Վրաստան, միջպետական նշանակության ավտոճանապարհները: Համայնքի բնակավայրերը հետ կապված են տեղական նշանակության ճանապարհներով:

Անվիճելի է, որ համայնքի առանձին բնակավայրերի անհրաժեշտ է շրջանցող ճանապարհ, որը առնչվելու է «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհի կառուցման հետ:

Համայնքում գրանցված է 1070 անձնական և 52 իրավաբանական անձանց տրանսպորտային միջոց:

Հիմնախնդիրներ՝

- *համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման ցածր մակարդակը.*
- *հասարակական տրանսպորտի կանգառների սակավություն.*
- *երթուղիները սպասարկող կազմակերպությունների պատասխանատվության ցածր մակարդակ.*
- *Համայնքի բնակավայրերի միջև կազմակերպված տրանսպորտային հաղորդակցության բացակայություն:*

1.10 Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների ընդհանուր թիվը կազմում է 48, այդ թվում՝

հասարակական սննդի խանութներ –

36,

բենզինի լցակայաններ – 2,

գազի լիցքավորման կետեր –

2, հանրային սննդի օբյեկտներ

– 3,

վարսավիրանոց – 2,

դեղատուն – 2,

անվադողերի վերանորոգման արհեստանոց – 1

Հիմնախնդիրներ՝

- *չկանոնակարգված բացօթյա առևտուր.*
- *համայնքում գյուղ մթերքների շուկաների կառուցում.*
- *գոլազդային վահանակների անբավարար քանակ և որակ.*
- *սպասարկման որակի բարձրացում,*
- *մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում և ընդլայման անհրաժեշտություն:*

1.11 Կրթություն

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից՝
միջնակարգ դպրոցներ – 8-ը՝ 818 աշակերտ, 249 աշխատատեղ,
հիմնական դպրոցներ – 2-ը՝ 45 աշակերտ 33 աշխատատեղ
դպրոցահեն նախակրթարաններ – 2, 19 աշխատատեղ, 70 երեխաներ
Վերը նշված հաստատությունները հանդիսանում են մարզային ենթակայության կառույցներ:
Համայնքում գործում է համայնքային ենթակայության 3 մանկապարտեզ:

Մանկապարտեզ հաճախում են 106 երեխա:

«Կանաչ տեխնոլոգիաների Հայկական կենտրոն» հիմնադրամի կողմից Աշոցք գյուղի մանկապարտեզում կառուցվել է ֆոտովոլտային պանելներով իրականացվող արևային տաք ջրամատակարարման աղբյուր:

Մանկապարտեզներից 1-ը ունի լոկալ ջեռուցում, 2-ը՝ տեղային:

Հիմնախնդիրներ՝

- *համայնքային 2 մանկապարտեզների շենքերի և գույքի մաշվածության բարձր աստիճան.*
- *2 մանկապարտեզների լոկալ ջեռուցման համակարգերի բացակայություն.*
- *մանկապարտեզների բակերի բարեկարգման և խաղահրապարակների կառուցման կարիք.*
- *նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակների*

անհամապատասխանությունը ԿԳՆ-ի կողմից հաստատված օրինակել հաստիքացուցակի հետ:

1.12 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Համայնքում գործում է 6 գրադարան, գրադարաններում զբաղվածների թիվը՝ 8: 2016թ.-ին համայնքապետարանի գրադարաններում առկա գրքերի քանակը կազմում է 52 հազ. Կտոր

Համայնքում մշակույթի տների թիվ՝ 6 , որից գործում են 4-ը:

Համայնքապետարանի ենթակայության տակ գործում է Արվեստի 1 դպրոց՝ 80 աշակերտով:

Համայնքի ենթակայության մարզամշակույթային կենտրոնում գործում են 1 պարարվեստի խմբակ 20, ձեռագործության 2 խմբակներ 25 աշակերտով, շախմատի խմբակ 15 աշակերտով:

Հիմնախնդիրներ՝

- ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ.
- մշակութային շենքերի մաշվածություն.
- մշակութային հաստատությունների ջեռուցման համակարգերի ներդրման կարիք.
- երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն.
- երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ:

1.13 Ֆիզկուլտուրա և սպորտ

Համայնքապետարանի ենթակայության մարզամշակույթային կենտրոնում գործում են դահուկային մարզաձևերի 2 մարզխմբեր, որտեղ աշխատում են 2 մարզիչ- մանկավարժներ:

Մարզախմբերում մարզվում են 25 – 30 երեխաներ:

Մարզախմբերի սաները անցած 4 տարիների ընթացքում ունեցել որոշակի հաջողություններ դահուկային մարզաձևերում՝ 2011 թ. պատանիների անվավոր դահուկների աշխարհի առաջնություն՝ 1 չեմպիոն, 1 բրոնզե մեդալակիր
2012 թ. դահուկային մարզաձևերի աշխարհի առաջնություն՝ 8 –րդ տեղ
2014թ. դահուկային մարզաձևերի աշխարհի առաջնություն՝ 9 –րդ տեղ
2015թ. դահուկային մարզաձևերի աշխարհի առաջնություն՝ 10 –րդ տեղ
2000 – 2016 թ.թ. դահուկային մարզաձևերի ՀՀ առաջնություններ՝ 83 ոսկի, 91 արծաթ, 80 բրոնզե մեդալներ
2015թ. Աշոցք գյուղում շահագործման է հանձնվել 800 քմ մակերեսով բացօթյա խաղահրապարակ

Հիմնախնդիրներ՝

- Համայնքի բնակավայրերում մարզադահլիճների , խաղահրապարակների կառուցման կարիք.
- մարզագույքի կարիք.
- ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ, իսկ հետագայում այն զգալի փոփոխություններ է կրել::

Հավելված 1-ում բերված է 25.12.2016թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը

1.15 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի գնահատում և վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի գնահատում և վերլուծություն

Ուժեղ	Թույլ
• Համանյքով է անցնում Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը • Ալպիական գոտիներում մեծաքանակ արոտավայրերի առկայություն • Մեծաթիվ բարձրորակ մասնագետ կադրերի առկայությունը (գյուղատնտեսներ, անասնաբույժներ, մանկավարժներ, մեխանիկներ, շինարարներ, ճարտարագետներ, տնտեսագետներ), • Աշխատուժի բավարարող առկայություն • Խմելու և ոռոգման ջրի բավարար պաշարների առկայություն • Բջջային կապի, ինտերնետի առկայություն և համայնքի բոլոր գյուղերում հեռուստատեսային ալիքների ընդունման հնարավորություն • Համեմատաբար զարգացած կոմունիկացիաների, հիմնարկների և այլ հաստատությունների առկայություն համայնքի կենտրոն Աշոցքում • Ձմեռային մարզաձևերի զարգացման համար բնակլիմայական նպաստավոր պայմաններ • ազգաբնակչության միատարր կազմը, • Անշարժ գույքի ցածր գներ • Սահմանամերձ համայնք լինելու հանգամանքով պայամանավորված սահմանագծում մաքսակետի առկայությունը, • Կառուցվող <<Հյուսիս-հարավ>> մայրուղու համայնքով անցնելու հանգամանքը	• Բնակլիմայական ցուրտ պայմաններ • Աշխատատեղերի պակաս և գործազրկության բարձր աստիճան, • Բնակչության արտահոսքի առկայություն • Աղքատության բարձր մակարդակ • Հեռավոր ու ծայրամասային համայնք լինելու հանգամանքը, • Անբարեկարգ փողոցների և բակերի առկայություն • Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակ • Ծնելիության ցածր մակարդակ • Համայնքային բյուջեի սուղ հնարավորություններ • Բնական ռեսուրսների սակավություն • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Բնակչության վարկունակության անկում • Համայնքի ներդրումների համար ռիսկային լինելն ու պակաս գրավչությունը • Ֆիզիկապես մաշված բնակարանային ֆոնդը, • Տարածաշրջանի սեյսմիկ անկայունությունն ու առկա շենք-շինությունների ցածր սեյսմակայունությունը, • Բնակավայրերի մեծ մասի գազֆիկացված չլինելը, • Ֆինանսական այլընտարնքային միջոցների բացակայություն, • Բնակչությանը մատուցվող ծառայությունների սահմանափակությունը, իսկ որոշ բնակավայրերում՝ իսպառ բացակայությունը,

• Էկոլոգիական կայուն իրավիճակը,	• Միջքաղաքային և ներհամայնքային տրանսպորտի անկանոն աշխատանքը, • Գործարար միջավայրի անկատարությունը • Բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման սուղ հնարավորությունները
---	---

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Աշոցք համայնքի տեսլականը (հեռահար նպատակը) համայնքի կայուն զարգացումն է, որին համայնքը ձգտում է հասնել 5 տարի հետո:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականը հետևյալն է՝

✓ համայնքի բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով և ունեն բարելավված կենցաղային ու բնակարանային պայմաններ,

✓ համայնքում ստեղծված է ներդրումների

համար մրցունակ միջավայր,

✓ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ

առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական

ենթակառուցվածքների հետ ինտեգրված զարգացող ընտանեկան գյուղացիական տնտեսություններ,

✓ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը բաց է ու թափանցիկ, բնակիչները մասնակից են ՏԻՄ որոշումների կայացմանը:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

✓ Ապահովել համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի՝ համամասնական զարգացումը

✓ Զարգացնել մարդկային կապիտալը

- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել քաղաքաշինական օրենքով սահմանված նորմերը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Ունենալ բարեկարգ բնակարանային ֆոնդ
- ✓ Բարելավել համայնքապետարանի և վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքային և գույքային պայմանները
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
